ՀՀ Վայոց ձոր մարզի Եղեգնաձոր քաղաքի
Հովի. Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմն. դպրոց

Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

ԹԵՄԱ՝ Ակսել Բակունցի <<Ալպիական մանուշակ>> պատմվածքի ուսուցման առանձնահատկությունները
ՈՒՍՈՒՑԻՉ՝ Ժաննա Զաքարյան
ԽՈՒՄԲ՝ Հայոց լեզու, գրականություն
ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լիլիթ Մարկոսյան

2 0 2 3 թ

Բովանդակություն

1. Ներածություն…….3
2. Ակսել Բակունցի <<Ալպիական Մանուշակ>> պատմվածքի ուսուցման առանձնահատկությունները……4
3. Եզրակացություն……9
4. Օգտագործված գրականության ցանկ……10

Ներածություն

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ բոլոր ժամանակներում հասարակության մեջ թյուր է ընկալվում կնոջ դերը, նրա իրավունքների պաշտպանությունը, ի հակադրում նրանց կարծիքի, որը ցածրացնում է կնոջ դերը և արժեքը:

Աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել և վերլուծել Ակսել Բակունցի <<Ալպիական Մանուշակ>> պատմվածքը, զուգահեռներ իրականացնել մերօրյա իրականության հետ:

Ակսել Բակունց <<Ալպիական Մանուշակ>> պատմվածքի ուսուցման առանձնահատկությունը

Հայ արձակում թերևս ոչ ոք այնպես կենդանի ու գրավիչ չի ներկայացրել լեռնային Հայաստանի բնությունը, ինչպես Բակունցը: Նա ունի բնության հազվագյուտ զգացողության և իր դիտումները կատարյալ արվեստով վերարտադրելու անկրկնելի դիրք: Հայրենի անտառներն ու դաշտերը, գետերն ու լեռները, ծաղիկներն ու բույսերը, հնձաններն ու ցելերը, հնության ավերակներն ու բնապատկերի մյուս երևույթները: Բակունցի գրչով կենդանագործվում են զարմանալիորեն տպավորիչ գույներով: Անհնարին է Բակունցի ստեղծագործության մեջ ցույց տալ մի պատմվածք, որ ներթափանցված չլինի բնությամբ նրանցից մեկն է <<Ալպիական մանուշակում>>: Հայրենի աշխարհի անվրեպ իմացությունը բնության և մարդու բանաստեղծական ընկալումը, խոսքի պատկերավորությունը, հոգեբանության վերլուծության նրբությունները թերևս Բակունցի և ոչ մի ուրիշ պատմվածքում չեն արտահայտվել, որքան <<Ալպիական մանուշակում>>: Այստեղ արտահայտվել են նրա արձակի էական հատկանիշները՝ ուրույն աշխարհազարգացումը, բարոյական ու գեղագիտական ըմբռնումների ինքնատիպությունը, նրա արվեստի փիլիսոփայությունը, անմնացորդ սերը հայրենիքի և մարդու հանդեպ: Ալպիական մանուշակաը հեղինակի քնարական օրագրությունն է՝ Հայաստանի պատմության, բնության, նրա մարդկանց ու արվեստի մասին: Բակունցն այստեղ նկարագրում է լեռնային Հայաստանի պատկերը՝ ավերակ բերդերով, ալպիական ծաղիկների գեղեցկությամբ, գյուղական կենցաղի բնորոշ տեսարաններով՝ օջախի առաջ չոքած կին, կորեկի արտում հոգնած հնձվոր, անմատչելի ժայռերում վազվզող երեխաներ: Հայաստանի բնության գեղեցիկ հատվածներից մեկն է Բակունցի նկարագրած Կաքավաբերդը, ամպերին հասնող բրոնզքարե արծիվները, սպիտակ ամպերի մեջ կորած բերդապարիսպներ, քարափներին թառած, տների երդիկնեից բարձրացող ծիլ քուլաներ: Եվ դրանց մեջ միակ ծաղիկը՝ ալպիական մանուշակը:

Այս անմատչելի լեռներին այցելության են գալիս մի հնագետ, մի նկարիչ և նրանց ուղեկիցը: Հնագետն ու նկարիչը տարբեր վերաբերմունք ունեն բնաշխարհի գեղեցկության հանդեպ: Հնագետն ամբողջ էությամբ կլանված է անցյալով, միտքը զբաղված է հնադարյան բերդի պատմությամբ ու ճարտարապետական կառուցվածքով: <<Աչքը պարիսպնեիրից չէր հեռացնում: Նրա գլխում բերդի պատմությունն էր, մագաղաթյա մատյաններում գրած խոսքերը իշխանական օրերի մասին, երբ զրահապատ ձիերի սմբակները դոփում էին երկաթյա մուտքի առաջ և ավարից դարձող նրա համհարզները ճոճում էին նիզակները: Ակնոցի արանքից նրա ուսյալ աչքերը տեսնում էին

զրահավորներին, մագաղաթյա մատենագրին՝ եղեգնյա գրչով նրանց գովքը հորինելիս, և նա լսում է հնօրյա ձիերի դոփյունը>> : Հնագետի համար աշխարհը ընդարձակ թանգարան էր։Նրա կոշիկները կրնկակոխ էին անում խոտ ու ծաղիկ։ Առաջին հայացքից հնագետի հակադրությունն է նկարիչը։ Նա Կաքավաբերդից էր եկել որոշակի պարտավորությամբ՝ նկարելու հնագետին հարկավոր տեսարաններ բայց, լինելով ավելի զգայուն խառնվածքի։ Նկարիչը տարվում է այդ բնավայրերի գեղեցկությամբ։ Նրա աչքից չեն վրիպում ո՛չ հովտում գալարվող Բասուտա գետը, ո՛չ Կաքավաբերդի ալպիական ծաղիկները, ոչ էլ օջախի առաջ չոքած գեղջկուհու գեղեցկությունը։ Նկարիչը կենդանի բնությունը սիրող, նրա վեհությունն ու գեղեցկությունը գնահատող մարդ էր։ Սրանով էլ տարբերվում էր հնագետից, որի համար կենդանի մարդն ու կենադանի բնությունը անկարևոր բաներ են իր գիտական հետաքրքրությունների համեմատությամբ։

<<Երբ հնագետը բուրգի ծայրից կանչեց, թե ինքը գտել է Բակուր իշխանի դամբարանը , նկարիչը չհասկացավ նրա խոսքը։ Աչքն անգղների պտույտի հետ էր, նրանց թևերի հզոր շարժումի, կեռ ու արնագույն կտուցների հետ։ Մի պահ մատիտը ձեռքին մնաց և չնկատեց, թե ինչպես գլխարկը սահեց ընկավ քարի վրա։

Հնագետի և նկարչի տարբերությունը պայմանավորված է նրանց խառնվածքներով։ Բնութագրելով նկարչին, Բակունցը գրում է << Հերիք էր աչքն ընկներ մի դեմքի, տեսներ գեղեցիկ մի անկյուն, մամռապատ մի քար, որպեսզի թղթի վրա մատիտով նկարեր այն, ինչ տեսել էին նրա աչքերը>> : Նկարիչը արտասովոր նմանություն է տեսնում քրմուհու վեհությունը հիշեցնող գեղեցկուհու և իր մի բարեկամուհու՝ սև թավշե գլխարկով քաղաքաբնակ կնոջ միջև։ Այդ երկու կանանց դիմագծերի, մանավանդ ծանոթ ժպիտի նմանության թելադրությամբ, իր նկարչական էտյուդատետրի մեջ նա մատիտի արագ շարժումով նկարում է գեղջկուհուն՝ <<օջախի մոտ նստած, աչքերը օջախի քարին>>։ Նա նկարում է ոչ թե իրեն հանդիպած և քրմուհու տպավորություն թողած կնոջը, այլ այն մեկին ծովափի կնոջը։ Գլորվել են տարիներն ու օրերը բաժանվել են ճամփաները, բայց նկարչի հոգում դեռ մխում էր հին կարոտը ։<<Մտքի մեջ մնացին մի զույգ մանուշակագույն աչքեր, գորշ գույնի վերարկու և հովանոցի ծայրը, որով կինը ավազի վրա խոստումներ էր գրում և ավերում>>։ Թեև նկարիչը <<հափշտակված է>> շրջազգեստը մինչև ներբաններին իջնող գեղջկուհով, բայց նրա միտքը ծովափնյա հուշերի հետ է. << Ծանոթ էին դիմագծերը, միտքն այնքան էր աշխատել նրա վրա տարիներ առաջ, փակ աչքերով նա տեսնում էր կնոջ պրոֆիլը>>։ Բնական է, որ Բակունցին չէր կարող գոհացնել ներքին հոգեբանական դրդումներ չունեցող, սոսկ արտաքին նմանության վրա կատարված ստեղծագործական ակտը>>։ Դրա համար էլ նա հավասարապես դատապարտում է և՛ հնագետի հափշտակությունն անցյալով, և՛ նկարչի

վերացական զմայլանքը: Նրանք հայ գյուղում տեսան միայն հնություններ ու գեղեցիկ բնություն, բայց անհաղորդ մնացին այս աշխարհի մարդկային արժեքներին իրական Հայաստանի հոգսերին ու դրամաներին: Բնորոշ է, որ հնագետի և նկարչի վերադարձով ոչ միայն չի ավարտվում պատմվածքը, այլև նրամեջ տեղ են գրավում նոր փոխհարաբերություններ ու նոր գույներ: Հեղինակն այստեղ շարունակ բանավիճում է Հայաստանի այն ընկալումների հետ, որ ունեն հայ գրողները միայն արտաքինից ճանաչող, նրան սոսկ հեքիաթի գույներ վերագրող մարդիկ: Գունազարդված Հայաստանի կողքին նա տեսնում է չգունազարդված Հայաստանը, մարդկային դրամաներով, տրտմությամբ ու հոգսերով լի երկիրը: Իրական Հայաստանի պատկերներից մեկն է հնձվորը: Մի պահ նա տրվում է թովիչ առասպելին, թե Կաքավաբերդի գլխին թաղված են ոսկե գանձեր, կառուցում է երազների մի ամբողջ աշխարհ, բայց շուտով էլ զգաստանում է << միտք էր անում հնձվորը, երբ նկատեց, որ կորեկի արտի կողքին է: Նա չուխան շպրտեց, չուխայի հետ էլ ավելորդ մտքերը, մանգաղով զարկեց, մի կապ կորեկ կտրեց>>: Իրական Հայաստանի ճշմարտությունն են ներկայացնում հնձվորի և նրա կնոջ կերպարները: Գյուղաշխարհի այս գեղեցկուհուն նկարիչը նկատեց ալպիական մանուշակի կողքին, բայց չիմացավ, թե ինչպիսի դրամա է սպասում նրան: Գալիս է ծանր աշխատանքից հոգնած, հալից ընկած հնձվորը: Գալիս է իր ամենօրյա սովորական ընթացքով և իմանում տեղի ունեցածը: Մի ակնթարթում հնձվորի հոգում բոցավառվում է քուլ ու անիմաստ խանդը.<<Մարդը գազազած արջի նման ոստյուն արեց, նրա մազոտ ձեռքերը սեղմեցին ծանր մահակը, և մահակն անասելի թափով իջավ կնոջ թիկունքին...

Կինը աղաղակ չհանեց, այլ ցավից գալարվեց: Նա ձեռքը թիկունքին տարավ, ապա դուրս եկավ վրանի դռանը անձայն հեկեկալու...Մարդը մի քիչ էլ դժգոհեց, ապա կերավ կորեկ հացը և փափախը գլխի տակ, մեկնվեց խսիրի վրա>>:

Այս դեպքի նկարագրությամբ Բակունցն ասում էր, որ գեղջական կենցաղը բնավ էլ հոգեպատա հովերգություն չէ, ինչպես թվում էր նկարչին կամ հնագետին: Այս միտքն արտահայտված է նուրբ պատկերով.<<Ցող կաթեց ալպիական մանուշակի ծաղկաթերթերի վրա>>: Իրեն հուզող հարցերի պատասխանը գտնելու համար Բակունցը հաճախ դիմում է բնության այս կամ այն երևույթի միջամտությանը: Այս պատմվածքում նման խնդիր ունի ալպիական մանուշակը: Այնպիսի գորովանքով ու հուզմունքով է նկարագրված լեռնային ծաղիկը, որ թվում է թե գործ ունես շունչ ու ոգի ունեցող <<կերպարի>> հետ: Հարցը միայն այն չէ, որ ալպիական մանուշակը ապահովում է պատումի քնարական երանգը: Սա իր հերթին: Մանուշակի կերպարով ի մի են գալիս պատմվածքի բազմազան թեմաները՝ հայրենի բնանկարի գեղեցկությունը, մարդու և բնության հարաբերությունը, հայ գյուղացու ցավն ու ողբերգությունը, հեղինակի գեղագիտական ըմբռնումը: Ահա պատմվածքի մուտքը, ուր ալպիական

մանուշակը խորհրդանշում է հայրենի բնաշխարհի, հազվագյուտ գեղեցկությունը. <<Կաքավաբերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է, ցողունը կաքավի ոտքի պես կարմիր, ծաղիկը՝ ծիրանի գույն: Քարի մոտ է բանում ալպիական մանուշակը, պարիսպների տակ: Արևից քարերը ծածկում են քար ու պարիսպ, մանուշակը թեքվում է, գլուխը հենում քարին>>: Մի այլ պարբերության մեջ մանուշակի միջամտությամբ Բակունցն արտահայտում է այն միտքը, որ չնայած երկիրն ունի այսպիսի վեհ գեղեցկություն, բայց հայ գյուղացին, նրանով հիանալու փոխարեն, տրվել է առօրյա հոգսերին:

<<Ամեն գարնանը, երբ Կաքավաբերդի լանջին բացվել է ալպիական մանուշակը, այծ ու ոչխար քշելեն բերդի լանջերը, պարկը պանրով լցրել ու ձմեռը կրծել կորեկ հաց և այծի պանիր>>: Ալպիական մանուշակը այն սիմվոլն է, որով Բակունցը ներկայացնում է հնագետի հոգու չորությունը. << Նա փայտի ծայրով արմատախիլ էր անում քարի ճեղքում բուսած մանուշակը>>, ինչպես նաև նկարչի ավերված սիրո հուշը: Խորունկ բովանդակություն ունի հետևյալ պատկերը, որ մեկ պատմվածքի սկզբում է երևում, մեկ՝ վերջում. <<Ծաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը ճոճք էր թվում աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան>>: Որն է այս այլաբանական պարկերի խորհուրդը:

Բնության երևույթի և մարդկային կյանքի միջև անցկացրած այս զուգահեռով Բակունցը հերքում է կյանքի մասին եղած պարզունակ պատկերացումները: Նա արտահայտում է այն միտքը, որ մարդկային կյանքը այնքան բարդ է, որ չի կարող տեղադրվել <<ծիրանագույն բուրաստանի>> սահմաններում: Այստեղից էլ Բակունցը հանգում է գեղագիտական հետևությանը, թե՝ արվեստագետը չպետք է բավարարվի առաջին թռուցիկ տպավորություններով, ինչպես վարվում են հնագետն ու նկարիչը: Նա պետք է խորանա երևույթների մեջ և հասնի էությանը: Սա է ճշմարիտարվեստի ճանապարհը:

Պատմվածքի արտահայտությունը:

Բակունցն այնքան կենդանի է պատմում հերոսների և նրանց շրջապատող առարկաների մասին, որ ընթերցողին ևս մասնակից է դարձնում պատկերի առաջացման ստեղծագործական հաճույքին: <<Ալպիական մանուշակը>> կարդալիս այն զգացումն ես ունենում, թե հեղինակի հետ միասին դիտում ես Կաքավաբերդի ամպերի մեջ սուզված պարիսպները, լսում ես ձորում աղմկող Բասուտա գետի շառաչը, վայելում ես ալպիական գլխահակ մանուշակի գեղեցկությունը: Ապա ՝ հերոսների հետ ոտք դնելով լեռնային գյուղը, տեսնում ես մտամոլոր հնձվորին, զննում ես վրանի առաջ խաղացող ոտաբոբիկ երեխաներին, դիտում ես արևախանձ կնոջ դեմքը: Ընթերցողը հեղինակի հետ միասին մասնակցում է երևույթը դիտելու և հայտանգործելու այն ցնծագին սիրույն, որով ծայրեծար ողողված է Բակունցի արձակի թանկագին էջը:

Հեղինակի և ընթեցողի այս համազգացումը պայմանականորեն կարելի է անվանել գրական պատումի մտերմացում: Հեղինակն այքան բնական է պատմում, որ ջնջվում

է նրա և ընթերցողի միջև եղած անջրպետը: <<Ալպիական մանուշակի>> արտահայտության մյուս հատկանիշը պատումի բանաստեղծականությունն է: Հուզական տպավորությունն ուժեղացնելու համար հեղինակը դիմում է քնարական խորհրդածությունների վառ համեմատությունների <<Ցողունը կաքավի ոտքի պես կարմիր, ծաղիկը՝ ծիարնի գույն>>, նախադասության կառուցման երգային ռիթմերի <<Սոտմաները զրնգացին, ցնցվեցին կնոջ երկար ծամերը>> և այլն:

Բանաստեղծությանը հատուկ արտահայտչական որոշ միջոցներ գործի դնելով, արձակագիրը քնարական ընկալումով տալիս է առարկաների այնպիսի պատկերներ, որոնք ունեն գեղանկարչական թանձրություն: Ահա մի այդպիսի պատկեր . <<Ներքևը, ձորում, Բասուտա գետի մյուս ափին, քարաժայռերի վրա, թառել են մի քանի տներ: Առավոտյան ծուխ է ելնում երդիկներից ծուխը ձգվում է կապույտ երիզի նման և հալվում ամպերի մեջ>>: Սա ճշմարիտ հայկական պեյզաժ է մատուցված գեղանկարչական ընդհանրացումով, լեռան խստաշունչ գծերի վեհությամբ, գունային բնորոշ շեշտերով: <<Ալպիական մանուշակում>> գրողն աչքի է ընկնում նաև բառի հուզական հնարավորությունները բացելու բացառիկ ձիրքով: Ամեն մի պարբերություն, ասես, կազմված է սրբատաշ տողերից, որոնց վրա զգացվում է խոսքի վարպետի ներշնչված աշխատանքը: Հենց միայն պատմվածքի մուտքը մի կատարյալ բառաքանդակ է . <<Կաքավաբերդի գլխին տարին բոլոր ամպ է նստում, բերդի ատամնաձև պարիսպները կորչում են սպիտակ ամպերի մեջ միայն սևին են անում բարձր բուրգերը: Հեռվից ավերակներ չեն երևում և այնպես է թվում, թե բուրգերի գլխին հսկում կա, գոց են ապարանքի երկաթե դռները, աշտարակի գլխից մեկը ահա ձայն է տալիս քարափը բարձրացողին>>: Այսպես հղկված է ամբողջ պատմվածքը, ուր հայոց լեզուն երևում է իր ճոխ հնարավորություններով: Այնպես՝ որ Հայաստանում կա մի գրող, որի բառերը զրնգում են կոմիտասյան շնչով և փայլատակում են կտավների գույներով: Դա Ակսել Բակունցն է:

Եզրակացություն

<<Ալպիական մանուշակ>>-ներ մեր օրերում էլ կան, որոնք տրորվում են մեծամտության, անզգամ մարդկանց կողմից։

Այս պատմվածքը հիմնականում մարդկային արժեքների մասին էր: Բակունցը համեմատում էր տարբեր մարդկանց աշխարհայացքները և նրանց արժեքները:

Օգտագործված գրականության ցանկ

- Ակսել Բակունց, Երկեր 2 հատորով, հատոր առաջին, Երևան, Հայպետհրատ, 1964:
- «Ալպիական մանուշակ»»: Արխիվացված է օրիգինալից 2016-07-07-ին: Վերցված է 2023.10